



ՎԱՆԱՁՈՐԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 27, 2014 թ.
9 (157)

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2015

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ



Սիրելի՛ ուսանողներ, հարգելի՛ գործընկերներ

Շնորհավորում եմ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, մաղթում ամենայն բարիք, հաջողություններ ուսման մեջ և աշխատանքում:

2014 թվականը հիշարժան տարեթիվ էր մեր հաստատության պատմության մեջ. լրացավ բուհի հիմնադրման 45-ամյակը, փոխվեց նրա կարգավիճակը: Վանաձորի պետական համալսարանը բոլորիս ամօն բացում է նոր հեռանկարներ, նոր հնարավորություններ: Ուստի մաղթում եմ, որ Նոր տարին բոլորիս բերի ստեղծագործական նվաճումներ և աշխատանքային հաջողություններ, մեր ընտանիքներին՝ բարեկեցություն ու ապահովություն: Թող բոլորիս հարկերի ներքո մշտապես թևածեն խիճնը ու երջանկությունը, թող բոլորիս սիրտն ու հոգին ափեափ լցված լինեն սիրով ու բարությամբ առ մերձավորը, հանդուրժողականությամբ և գուրով՝ առ ծանոթն ու անծանոթը: Թող 2015 թվականին և գալիք բոլոր տարիներին խաղաղությունը տիրի մեր երկրում ու ամբողջ աշխարհում:

Գուրգեն Խաչատրյան
ՎԴՀ ղեկավար

ՎՊՀ հենակետային վարժարանն անվանակոչվեց ԶՈՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ անունով

Վանաձորի Զ. Թումանյանի անվան պետական համալսարանի հենակետային վարժարանի մուտքը լի էր բազմությամբ. պետական ու հոգևոր այրեր, համալսարանի աշխատակիցներ, ուսանողներ և աշակերտներ հավաքվել էին ներկա լինելու ոգեշնչող ու հուզումնալից արարողության՝ հենակետային վարժարանի անվանակոչությանը:

ՀՀ Աժ պատգամավոր Էդմոն Մարությանի առաջարկով և ՎՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի համաձայնությամբ ՎՊՀ հենակետային վարժարանն անվանակոչվեց վարժարանի շրջանավարտ, հայ զինվորական, հետախույզ-կապիտան Զորիկ Գևորգյանի անունով, ով իր կյանքը նվիրաբերեց հայրենիքին՝ թշնամու հետախուզողի վերսիոն ներթափանցման փորձը կասեցնելիս: Հետոսը 2004-2006 թթ. սովորել է բուհի վարժարանում, որն այսուհետ կրելու է իր անունը:

Անվանակոչման արարողությանը ներկա էին ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, ՎՊՀ հենակետային վարժարանի տնօրեն Սամվել Աղաջանյանը, Գուգարաց թեմի առաջնորդ բարձրաշնորհ Տեր Սեպուհ արքեպիսկոպոս Զուլքյանը, ՀՀ Աժ պատգամավոր Էդմոն Մարությանը, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, ԼՍ մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մինաս Սայադյանը, ՀՀ զինված ուժերի 3-րդ բանակային կորպուսից ներկայացուցիչներ, Զորիկ Գևորգյանի ընտանիքի անդամները, հարազատները, դասախոսներ, ուսանողներ, աշակերտներ:



Ներկաները նախ մեկ րոպե լռությամբ հարգեցին 2014 թ. օգոստոսի 1-ի լույս 2-ի գիշերը Մարտակերտի շրջանում թշնամու հարձակումը կասեցնելիս զոհված հերոսի անմար հիշատակը. «Սա ևս մեկ քայլ է, որով մեր հայ մարտիկը, մեր վարժարանի շրջանավարտը, մեր հերոսը հավերժ կմնա բոլորիս սրտերում», - նշեց ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը: - Այսօր մեր համալսարանում իրադարձային օր է նրանով, որ հենակետային վարժարանը պետք է անվանվի մեր վարժարանի սան, իր արիությամբ աչքի ընկած քաջազուն Զորիկ Գևորգյանի անունով: Այո՛, արիությունը, սիրագործությունը բոլորին չէ հատուկ: Ես ուզում եմ իմ խոնարհումը բերել նրա ծնողներին, այն արմատներին, որտեղից նա ընծյուղվել է, այն ուսուցիչներին, այն ընկերներին, այն շրջապատին, որտեղ նա մեծացել է: Ծնորհակալություն նաև պարոն Մարությանին նման նախաձեռնության համար: Եվս մեկ անգամ՝ շնորհակալություն Զորիկի ծնողներին, շնորհակալ եմք, որ նման որդի եք դաստիարակել»:

ՀՀ Աժ պատգամավոր Էդմոն Մարությանը նշեց, որ անչափ հպարտ է վանաձորի քաջարի մարտիկի հերոսական քայլով. «Ես հպարտ եմ, իրապես, որ Վանաձոր քաղաքը հերոս է տվել, և կարևոր հանգամանք է, որ մենք մեր հերոսներին ճանաչում ենք: Սա նաև լուրջ խթան կարող է հանդիսանալ, մեր մյուս հերոսներին ճանաչելու, հարգելու և արժանին մատուցելու համար: Ես շնորհակալ եմ համալսարանի ղեկավարությանը, այս նախաձեռնությունը կյանքի կոչելու համար: Մենք պետք է սիրով հիշենք, մեր որդիներին դաստիարակենք

այն ոգով, որով առաջնորդվեց Զորիկ Գևորգյանը»:

Հենակետային վարժարանի տնօրեն Սամվել Աղաջանյանն իր խոսքում նշեց, որ այսուհետ ամեն ուսումնական տարի «Ռազմագիտություն» առարկայի առաջին դասերը կնվիրվեն Զ. Գևորգյանի կենսագրությանն ու մարտական ուղուն. «Այսօր ինձ համար շատ դժվար է խոսել, մենք պարուրված ենք հակասական զգացմունքներով. մի կողմից մենք ողբում ենք երիտասարդի կորուստը, մյուս կողմից հպարտության զգացումն է, որ ևս մեկ անգամ վկայում է՝ հայոց գեներ չի դադարում հերոսներ ունենալ, հայ զինվորը մարտունակ է»:

Հենակետային վարժարանի 12-րդ դասարանի աշակերտուհի Ալինա Խաչատրյանը ներկայացրեց թիվ 26 դպրոցի աշակերտների կողմից գրված բանաստեղծությունը՝ նվիրված Զորիկ Գևորգյանի հիշատակին:

Ելույթով հանդես եկավ նաև ՀՀ զինված ուժերի 3-րդ բանակային կորպուսի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով ավագ սպա, մայոր Կարեն Քիբանյանը: Նա նշեց, որ ամենքս էլ պետք է ոգեշնչվենք հայրենասիրությամբ, քանի որ խաղաղության ջատագովը միշտ պետք է պատրաստ լինի պատերազմների:

Գուգարաց թեմի առաջնորդ բարձրաշնորհ Տեր Սեպուհ արքեպիսկոպոս Զուլքյանը կոչ արեց ներկաներին միասնաբար աղոթք հղել առ Աստված՝ հերոս Զորիկ Գևորգյանի անմար հիշատակի, նրա հոգու հանգստության համար:

Վարժարանի ցուցանակի բացման համար հրավիրվեցին ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, Զորիկ Գևորգյանի քույր Անի Գևորգյանը և վարժարանի 12-րդ դասարանի աշակերտ Անդրանիկ Փոթինյանը:

Զկարողանալով զսպել հուզումները՝ Զորիկ Գևորգյանի քույրը նշեց. «Սիրտս դողում է, երբ վարժարանի աստիճանները բարձրանում եմ ու կարդում Զորիս անունը: Ես խաղաղ ու երջանիկ ընտանիք ունեի: Մենք Զորիս հետ վարժարան ենք մտել ժպիտով, հիմա վարժարան եմ մտնում արցունքներով... Այդ խեղդող ցավը երբեք ոչ ոք թող չզգա... Վարժարանը հիմա հերոսիս անունն է կրում, իմ Զորը միշտ է հերոս եղել: Ես այլ խոսքեր չեմ կարող ասել, որովհետև...որովհետև ես Զորիս եմ ուզում...»:

Ցուցանակի բացման արարողությունից հետո ներկաները հրավիրվեցին Վանաձորի Զ. Թումանյանի անվան պետական համալսարանի Զորիկ Գևորգյանի անվան հենակետային վարժարան՝ ծանոթանալու հերոսի հուշանկյունին:

Զորիկ Գևորգյանը ծնվել է 1989 թվականի հունվարի 29-ին ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքում, այնուհետ մշտական բնակության տեղափոխվել ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաք՝ Հայրը եղել է զինվորական՝ 1996 թվականին միակ քրոջ՝ Անի Գևորգյանի (ծն. 1990 թ.) հետ հաճախել են Վանաձորի Մարշալ Բաղրամյանի անվան թիվ 26 դպրոցը, երկուսով սովորել են նույն դասարանում: 2004 թվականին 8-րդ դասարանը ավարտելով՝ քույր ու եղբայր տեղափոխվում են ՎՊՀ հենակետային վարժարան: 2006 թ. ավարտելով 10-րդ դասարանը՝ Զորիկն ընդունվում է Վազգեն Սարգսյանի անվան



Ռազմական ինստիտուտ՝ սկզբում ընտրելով հետևակի մասնագիտությունը, այնուհետ՝ հետախույզի: 2010 թվականին լեյտենանտի կոչումով անցնելով ՀՀ ՁՈՒ շարքերը՝ ծառայության է անցել N զորամասում որպես հետախուզական դասակի հրամանատար:

2013 թվականին բարեխիղճ ծառայության համար արժանանում է ավագ-լեյտենանտի զինվորական կոչման և տեղափոխվում N զորամաս: Որպես վաշտի հրամանատար՝ 2014 թ. օգոստոսի 1-ի լույս 2-ի գի-

շերը՝ Մարտակերտի ուղղությամբ հակառակորդի հետախուզադիվերսիոն ներթափանցման փորձը կասեցնելիս արիաբար զոհվում է քաջարի սպան Ջորիկ Գևորգյանին հետմահու շնորհվել է կապիտանի կոչում: ՀՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով, իսկ ԼՂՀ նախագահի հրամանագրով՝ «Արիության համար» մեդալով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹՈՒՐՔ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԻ ՀԵՏ



Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից՝ երիտթուրքերի պարագլուխ, Ջեմալ Փաշայի թոռ, լրագրող, հրապարակախոս Հասան Ջեմալը Հայաստանի տարբեր մարզերում ներկայացրեց իր հեղինակած «1915 - Հայոց ցեղասպանություն» գիրքը:

Վերջինիս հետ հանդիպում էր կազմակերպվել նաև Վանաձորի պետական համալսարանում: Բուհի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները հնարավորություն ունեցան լսելու Ջեմալին և նրան ուղղելու իրենց հուզող հարցերը:

Հանդիպմանը ներկա էին Գուգարաց թեմի առաջնորդ, բարձրաշնորհ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը, ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ:

Գ. Խաչատրյանը, ով նախապես ծանոթացել էր գրքի բովանդակությանը, խոսեց իր տպավորությունների մասին. «Գիրքը կարդացել եմ և ապշած եմ հեղինակի կամային հատկություններով, ով անցել է փշոտ ճա-

նապարհ՝ դատավարություններ, հայրենիքի դավաճանի պիտակ, բարոյական մտատանջություններ, իր արմատների և անցյալի նորովի որակավորում: Աստվածաշնչում ասվում է՝ հայրը պատասխանատու չէ որդու, որդին՝ հոր արարքի համար. սա չլսված բան է, որ թոռն է պատասխանատվություն կրում պապի ոճրագործության համար կիսելով հայերիս ցավը»:

Ցեղասպանության իրողությունն ընդունած Հասան Ջեմալը պատմեց, թե ինչպես 2008-ի սեպտեմբերին այցելել է Ծիծեռնակաբերդ և ծաղիկներ դրել անմար կրակին: Նա 2010-ի ապրիլի 24-ին գրել է, որ հարյուրհազարավոր հայերի կոտորածը ժխտելը նշանակում է հանցակից դառնալ մարդկության դեմ իրագործված ոճրագործությանը: Հասան Ջեմալը թուրքական իշխանության կողմից հալածանքների է ենթարկվել հատկապես գրքի վերնագրի ընտրության հարցում, սակայն չի համաձայնել փոխել այն:

Նա նշեց, որ գիրքը գրվել է, որպեսզի երկխոսության հարթակ դառնա հայ և թուրք հասարակությունների միջև՝ առանց ազգայնամոլական գաղափարների, իսկ դրա համար անհրաժեշտ է նայել առաջ:

Գրքում տեղ են գտել տարբեր տարիներին գրված հոդվածներ, հանդիպումների, ինչպես նաև Հայաստան կատարած այցի մասին պատմող նյութեր:

Հասան Ջեմալի խոսքին հաջորդեցին համալսարանականների բազմաթիվ հարցերը: Դրանք հիմնականում գրքում տեղ գտած հակասական փաստերի, պատմական իրողության շեղումների մասին էին: Իսկ հարցերի ընդհանուր ենթատեքստն այն էր, որ անցած 100 տարիները չեն կարող մոռացության տալ մեր պատմության արյունոտ էջերը. ոճրագործությունը վաղեմության ժամկետ չունի:



«ՎԵՐԻՏԱՍ»-Ի ՅԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ



Գերմանիայի Յեյդելբերգ քաղաքում կայացավ «Տեմպուս Վերիտաս» ծրագրի հերթական հանդիպում-քննարկումը, որին մասնակցեց նաև Վանաձորի պետական համալսարանը: Որպես «Վերիտաս» ծրագրի անդամ մեր բուհից քննարկմանը ներկա էին ՎՊՀ գիտական և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Արեն Սանթրյանը և ռուսաց լեզվի ամբիոնի ասիստենտ ժաննա Հակոբյանը: Հանդիպում-քննարկմանը մասնակցեցին նաև 11 հայաստանյան և 5 արտասահմանյան համագործակից բուհերի ներկայացուցիչներ:

Մինչ օրակարգային հարցերին անցնելը՝ հանդիպման առաջին օրը տարբեր երկրներից ժամանած մասնակից բուհերի ներկայացուցիչներին ողջունեց Յեյդելբերգի համալսարանի պրոֆեսոր, դոկտոր Օլիվեր Գրուսը: Նա շնորհակալություն հայտնեց կատարված որակյալ աշխատանքի համար և հույս հայտնեց, որ հերթական հանդիպումը ևս կնպաստի ծրագրի արդյունավետ գործընթացին:

Հանդիպման առաջին օրը ճշգրտվեցին այցի հիմնական նպատակները, յուրաքանչյուր բուհ զեկուցեց ծրագրի առկա վիճակի, խնդիրների և հանդիպումից սպասելիքների մասին:

Համատեղ քննարկումից հետո ՎՊՀ-ն, ԵՊՀ-ն և Երևանի Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանը ներկայացրին միացյալ ուժերով պատրաստված շնորհանդես, որտեղ խոսվում էր այդ բուհերի առանձնահատկությունների, խնդիրների և լուծման հնարավոր ճանապարհների մասին:

Հանդիպման հաջորդ օրը իրենց բուհերի բիզնես-նախագծերը, հետբուհական կրթության վիճակը ներկայացրին արտասահմանյան բուհերը: Այդ բուհերն են

Գերմանիայի Յեյդելբերգի համալսարանը, Միացյալ թագավորության Բաֆ Սպա համալսարանը, Շվեդիայի տեխնոլոգիայի արքայական ինստիտուտը և Իսպանիայի ժիրոնայի համալսարանը:

Լսելով հայաստանյան և արտասահմանյան բուհերի զեկուցումները՝ հանդիպմանը ներկա ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչները հանդես եկան իրենց առաջարկություններով՝ հետբուհական ծրագիրը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ:

Ձեկուցումներից և բուռն քննարկումներին հաջորդեց փոքր խմբերով քննարկումը. յուրաքանչյուր հայաստանյան բուհ ներկայացրեց իր եռամյա աշխատանքների պլանը՝ Բոսնիա Հերցեգովինայի Մոսթարի համալսարանի դոկտորական կրթության ծրագրի օրինակի հիման վրա:

Հանդիպման վերջին օրը շարունակվեց փոքր խմբերով աշխատանքը, այն ամփոփվեց, նախանշվեցին հետագա աշխատանքների պլանները:

Ծրագրի անդամները նշեցին, որ հաջորդ հանդիպումը համագործակից բուհերի հետ տեղի կունենա Երևանի Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանում 2015 թ. հունվարի 26-27-ին:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ ՏՈՆԵՑ ԻՎՆՆԱԴՐՄԱՆ 45-ԱՄՅԱԿՆ

Արդեն 45-ամյա պատմություն ունեցող ՎՊՀ մանկավարժության ֆակուլտետը օրերս բուհի հարկի տակ մեծ շուքով նշեց իր հոբելյանական հերթական տարեդարձը:

Տոնական միջոցառմանը ներկա էին ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Արեն Սանթրյանը, մանկավարժության ֆակուլտետի ղեկան թերեզա Շահվերդյանը, ֆակուլտետի ամբիոնների վարիչներ, դասախոսներ, ուսանողներ:

Մանկավարժության ֆակուլտետը ղեկավարել են Մելս Սանթրյանը (1969-1970), Նիկոլայ Միքայելյանը (1970-1971), Սուրեն Ալավերդյանը (1972-1975), Խաչիկ Աղաջանյանը (1975-1977), Հակոբ Անդրեասյանը (1977-1985), Սուրեն Վարդանյանը (1985-1996), Թերեզա Շահվերդյանը (1996թ. մինչ օրս):

Ուսանողները փոքրիկ տեսանյութի միջոցով ներ-



կայացրին մանկավարժության ֆակուլտետի 45-ամյա պատմությունը: ՎՊՀ ռեկտոր Գ. Խաչատրյանը նշեց, որ մեր բուհի հետ համընթաց զոյություն ունեցող մանկավարժության ֆակուլտետն իսկապես հարուստ պատմություն ունի: Այդ ճանապարհին նա ունեցել է և՛ նվաճումներ, և՛ կորուստներ:



Ֆիզիկոս ՎԻԼԻԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ շնորհվեց ոսկե հուշամեդալ



ՎՊՐ Ֆիզմաթ ֆակուլտետի ուսանողական խորհրդի և մի շարք շնորհալի ուսանողների նախաձեռնությամբ դեկտեմբերի 19-ին նշվեց ֆիզիկոս Վիլյամ Սարգսյանի ծննդյան 70-ամյակը:

Միջոցառմանը ներկա էին ՎՊՐ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, ֆիզմաթ ֆակուլտետի դեկան Յերմինե Գրիգորյանը, ՎՊՐ պրոֆեսորադասախոսական կազմից ներկայացուցիչներ, գործընկերներ, ուսանողներ:

Միջոցառման կազմակերպիչները նախ ներկայացրին վաստակաշատ դասախոսի կենսագրությունը, անցած ուղին ու մասնագիտական ձեռքբերումները:

Վ. Սարգսյանին իր շնորհավորանքի խոսքն ուղղեց ՎՊՐ ռեկտոր Գ. Խաչատրյանը. «Յոթեկարի հետ շփվող մարդիկ բավականին բաներ ունեն սովորելու, որովհետև նա շատ ինտելեկտուալ մարդ է: Ես համալսարանի

ձեռքբերումն են համարում այն, որ Դուք այստեղ եք Ձեր կենսագրությունը ծավալել և այստեղ մնացել»:

Ուկտորը նաև կարգաց ՎՊՐ գիտական խորհրդի որոշումը, հորեյարին կրթության և գիտության ոլորտում ունեցած ավանդի և ծննդյան 70-ամյակի կապակցությամբ շնորհեց ՎՊՄԻ վերջին ոսկե հուշամեդալը:

Յոթեկարին շնորհավորեց նաև ֆիզմաթ ֆակուլտետի դեկան Յ. Գրիգորյանը՝ մաղթելով քաջառողջություն, երկար տարիների անհոգ կյանք: Նա նաև շնորհակալություն հայտնեց ֆակուլտետի ուսանողներին միշտ նախաձեռնող և ինքնատիպ լինելու համար:

Շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսքերն ընդմիջվում էին երաժշտական գեղեցիկ կատարումներով և արժանանում ծափերի:

Մինչ շնորհավորանքի խոսքերին անցնելը՝ նա ներկաներին կոչ արեց 1 րոպե լռությամբ հարգել նրանց հիշատակը, ովքեր ևս մասնիկն են այս 45-ամյա պատմության, սակայն այսօր մեզ հետ չեն:

Լռության րոպեից հետո բուհի ռեկտորը շնորհավորեց ներկաներին հիշարժան օրվա առթիվ. «Ֆակուլտետի դեկան Թ. Շահվերդյանի գլխավորությամբ շնորհավորում են բոլորիդ, բոլոր ամբիոններին առանձին-առանձին, ողջ կոլեկտիվին՝ մաղթելով ուսանողակենտրոն, բեղուն և վաստակաշատ աշխատանք: Շնորհավորում են նաև պրոֆեսորադասախոսական կազմին, այն դասախոսներին, ովքեր պատվով են կրում դասախոսի կոչումը, այն ուսանողներին, ովքեր նպատակասլաց են և անտեղի ժամանակ չեն վատնում, այն շրջանավարտներին, ովքեր համալրել են դասախոսների շարքերը: Շնորհավոր տոնդ, մանկավարժության ֆակուլտետ, թո՛ղ նման տոներն անպակաս լինեն մեր բուհից»:

Իր կոլեգաներին, ուսանողներին և շրջանավարտներին շնորհավորեց նաև մանկավարժության ֆակուլտետի դեկան Թ. Շահվերդյանը: Նա հիշեց, թե ինչպես է նորավարտ ութ դրել մանկավարժական ֆակուլտետ՝ չիմանալով, որ գալիքում շուրջ 20 տարի դեկավարելու է այդ կոլեկտիվը: Նա խոսեց ֆակուլտետի դասախոսական կազմի, գրանցած հաջողությունների մասին, որի շնորհիվ ֆակուլտետը երբեք դիմորդի խնդիր

չի ունեցել: «Սիրելի՛ ներկաներ, շնորհակալ եմ, որ մեզ հետ եկել եք նշելու մեր տոնը: Շնորհավորում են բոլորիս այս ավանդական տոնի առթիվ: Քանի դեռ կա համալսարանը, այս տոնը պետք է նշվի»:

Մանկավարժության ֆակուլտետի ուսանողները շարունակում են բարձր պահել հարազատ բուհի անունը: Նրանք աչքի են ընկնում իրենց գիտելիքների պաշարով, ակտիվ մասնակիցն են միջբուհական, միջազգային բազմաբնույթ գիտաժողովների, մշակութային և մարզական միջոցառումների: Նրանցից ոմանք այսօր կրթությունը շարունակում են եվրոպական հայտնի համալսարաններում՝ ներկայացնելով ազգային մշակույթն ու ցուցաբերելով գիտելիքների բարձր մակարդակ:

Մանկավարժական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Տաթև Տոնոյանը ֆակուլտետի ուսանողների և շրջանավարտների անունից ևս մեկ անգամ շնորհավորեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց բուհի ռեկտորին, ֆակուլտետի դեկանին և մասնագիտական ոլորտում գիտելիքներով, կարողություններով և հմտություններով իրենց զինող բոլոր դասախոսներին՝ ցուցաբերած մեծ նվիրումի ու անձնվեր աշխատանքի համար:

Միջոցառումն ավարտվեց հայրենասիրական երգերի շարքով և տոնական հրավառությամբ:

Նարինե ՆԵՐՍԵՍՅԱՆ



ՆԱ ՍԻՐՈՒՄ Ե ԿՅԱՆՔԸ

Ծերությունը սկսում է այն պահից, երբ մարդը կորցնում է սովորելու ունակությունը:

Արթուրո Գրաֆ

Ալեքսանդր Կարգանյան: Կենսաբանաքիմիական ֆակուլտետի քիմիայի ամբիոնի փորձառու դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ: Թեկնածուականը պաշտպանել է Մոսկվայում՝ Երկրի ֆիզիկայի ինստիտուտում:

Դժվար է կարճ բնութագրել մի դասախոսի, որն իր աշխատանքային կենսագրության 44 տարիներն անցկացրել է նույն աշխատավայրում՝ մեր ինստիտուտում (համալսարանում), նրա կամարների ներքո, լսարանների պատերից ներս:

Բավական ժամանակ է անցել այն օրից, երբ 1970 թ. մտավ լսարան. դա հեռակա բաժնի առաջին տարին էր, երկու տարի հետո ստացիոնարը բացվեց: Հիշողության մատյանը լիքն է տարեթվերով, լավ ու վատ իրադարձություններով, ուրախ ու տխուր դեպքերով, բայց նա, չնայած պատկառելի տարիքին, թոթափելով տարիների փոշին, հիշողությունն առանց փորփրելու, լարելու, պատմում է իր գլխով անցած ամեն ինչ: Հաճելի է նրան լսելը. նրա կյանքի պատմությունը նման է գեղարվեստական վեպի՝ լի վերուվար ընթացներով, կուլմինացիոն պահերով... Չնայած այդ ամենին, նա չի կորցրել կենսաունակությունը, ժպտալու, լսարան մտնելու, մատուցվող նյութը հավուր պատշաճի ներկայացնելու կարողությունը: Խնամված, կոկիկ տեսքն ասում է, որ նախանձախնդրորեն է մոտենում դասախոսի իր կոչմանը, որովհետև հակադարձ համեմատական ազդեցություն է թողնում. «Իմ լավ տեսքը դրականորեն է ազդում ուսանողի տրամադրության վրա, իսկ նրանց լավ տրամադրությունը՝ իմի, և ընդօրինակելու օրինակ է նրանց համար: Նա նաև մեղվաբուծությամբ և նրանց արգասիքների օգտագործումով է զբաղվում, որն իր նախասիրություններից մեկն է և իր ազատ ժամանակի, հողվածների, դասախոսությունների, ղեկավարած ուսանողական ավարտաճառերի, գրվելիք գրքի գիտական հենքը: Երբ տարիներ առաջ բացվեց գիտական կաթինետը, դասախոսական կազմից առաջիններից մեկը նա էր, որ սկսեց ընկերություն (բարեկամություն) անել համակարգչի ու բարդ, խճճված մեծ սարդոստայնի՝ համացանցի հետ: Վարանումս մեծ էր, որովհետև գիտեի, որ անգամ միջին սերնդի դասախոսներից շատերն էին դժվարանում օգտվել համակարգչից: Այսօր էլ կան տարեց գիտնականներ, որոնք այդպես էլ չհամակերպվեցին նոր երևույթին, համարելով, որ իրենց համար ուշ է նրանով աշխատելը: Բայց նա, չվարանելով, սկսեց առաջին դասարանցու բարեխղճությամբ սովորել թե՛ համակարգիչը, թե՛ հայկական տառերը, թե՛ հայերենի ուղղագրությունն ու կետադրությունը (չէ՞ որ նա ռուսական կրթություն էր ստացել Վրաստանում):

Ընկեր Կարգանյանի հետ զրուցելու, բուհի երիտասարդ դասախոսներին և ուսանողությանը նրան ներկայացնելու, ավելի մոտիկից ճանաչելու ձգտումն անկեղծ մի մղումով է պայմանավորված՝ հարգել կենդանի լեզունը մարդուն, գնահատել նրա կատարած մանկավարժական աշխատանքը, նվիրումն իր ընտրած ուղուն: Ծննդյան հոբելյանները, մրցանակներն ու դափնիները շրջանցել են նրան, բայց նա համեստորեն իրեն գնահատված ու պարզևատրված է համարում՝ իր ուսանողների հարգանքն ու սերը վայելելով:

Նա սիրում է կյանքը և ոչ մի բանի հանդեպ անտարբեր չէ: Բուսաբուծությամբ էլ է զբաղվում. ակնամոմի սպիրտային լուծույթ է ստանում, որն օգտագործվում է բուժական նպատակներով: Բնության նկատմամբ սիրո դրսևորման արդյունքն են իր ծաղկանոցում աճեցրած ծաղիկները, որն ամեն գարնան գալու հետ նվիրում է համալսարանի աշխատակիցներին: Իսկ վարժարանի մասնաշենքի մոտ տնկած խաղողի վազը աչք է շոյում տարվա բոլոր եղանակներին, բացի այդ ամեն աշնան ու ձմեռնամուտի հիանալի կերակուր է փետրավորների համար:

Ընկեր Կարգանյանի կյանքի փիլիսոփայությունը հիացնում է ինձ. «Ամեն վատությունից փորձում եմ լավություն կորզել: Ինչպե՞ս: Երբ ինձ մերժեցին նյութս համակարգչով հավաքել, ես մտածեցի, որ ժամանակն է ինքս սովորեմ: Երբ աշխատանքից ազատվելու դամոկլյան սուրն էր կախված, սկսեցի ավելի շատ գիտական հողվածներ գրել ու հրատարակել»:

«ՎԴԴ կենսաբանաքիմիական ֆակուլտետի պրոֆեսորդասախոսական կազմում իր ուրույն տեղն ունի մեր շատ սիրելի դասախոս Կարգանյանը: Նա իրականացնում է դասախոսի պաշտոնին համապատասխան գիտամանկավարժական գործունեություն: Ու, չնայած տարիքին, թե՛ դասախոսությունների, թե՛ գործնական, թե՛ լաբորատոր պարապմունքների ժամանակ ցուցաբերում է այնպիսի ջանասիրություն և աշխատասիրություն, որ զարմանք է առաջացնում բոլոր ուսանողների մոտ: Նա առանձնահատուկ է նրանով, որ ուսանողների հետ պարբերաբար խորհրդատվություն է անցկացնում, դրանով իսկ լավ հարաբերություններ ստեղծում մեզ հետ: Մեր կարծիքով, նրա դասերից ուսանողը ձեռք է բերում ոչ միայն մասնագիտական որակներ, այլև՝ գործնական, տեսական, հոգեբանական, որոնք օգնում են կյանքի տարբեր ոլորտներում ճիշտ կողմնորոշվելու համար» (կենսաբանաքիմիական ֆակուլտետի «Դեղագործական քիմիա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Բախչինյան Մարիամ):

Դասախոսին ուսանողից ավելի լավ չի կարող բնութագրել ոչ ոք: Հենց դրա համար էլ կա «Դասախոսն ուսանողի աչքերով» հարցաթերթիկը: Հաճախ աչքի անցկացնենք այն ու տարիքը երբեք պատճառ չբերենք: Ծերերի փորձն արժե երիտասարդների ձեռնեցությանը:

Կարինե ՂԱԶԱՐՅԱՆ

(ամբողջական տարբերակը տես համալսարանի համացանցային կայքէջում)



Ռուզան ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

«Հայոց լեզու և գրականություն»,
1-ին կուրս (մագիստրատուրա)

Մտտենում է դանդաղ զոհարանը հեռվի,
Միջնադարյան մուժ է մայրամուտի ծոցում.
Հինավուրց ու նորված գաղթավայրիս քիվին
Լուսինը ինձ ճամփող սարդոստայն է գործում:

Թումբ է դառնում բուռ-բուռ երազներիս փոշին,
Թափառում է շուրջը շուքս խաչատարած.
Ու՞մ են աղաչելու, որ չնստի կոճղին,
Չուտի գաթան բուրող՝ կարոտի մեջ թխված:

Թևե՛ր էի տենչում, մի թիթեռի ճախրա՛նք.
Չեք էլ թողնում՝ պարե՛մ քարերին այս խռով,
Ոտքերիցս բոբիկ հոսի արյունը տաք,
Ինչպես գույնը՝ խոսքից, երբ չի լսում ոչ ոք...

Օ՛, ոնց են թախանձում՝ թողած և՛ շուն, և՛ շեն,
Որ թիկունքից, գոնե, զարկեն մոռացվողիս,
Որ երբ օտարների ժպիտներից մրսեն,
Հիշեն իմ վերջինը՝ բազուկներում հողիս...

Ինքնաթիռների երամների պես
Ու պիղատոսյան ոտնաքայլերի
Ինձնից բառերն են հեռանում կարծես.
– Խրտվիլակիս խաչն ո՞վ պիտի տանի...

Ձգվում է լռին անմարդ Գողգոթան,
Անգոր են անգամ խաչն իմ շալակել.
– Տե՛ր, քո դրախտում պետք չէ՞ խրտվիլակ –
Ցնցոտիները ինչ ասես արժեն:

Բա ցնորքնե՛րը՝ աչքերում անգույն,
Ծաղկագրերի փնջի պես անտեր.
– Մի՞թե հավքերը քաղցած են լինում,
Երբ բանաստեղծի բառերն են գաղթել...

Տառապանքի պատառներից
Փշուրներ կան շուրթիս վրա.
Կանչի՛ր անքուն թռչուններին:
Քեզ հանդիպած խաչներուկում
ես փորձեցի նրանց նման
Իմ թևերը բացե՛լ, բացե՛լ,
Բայց թևերս խաչներուկի լայնքով էին...
Թռչունները գուցե ասեն,
Թե ինչու՞ ես վերջին պահին
Մեղքի տեղ մեխ նախընտրեցի,
Բայց քույրերս կասե՞մ արդյոք,
Որ սերս են սեպից փրկել...

Հանգավորիր լռությունս
Կամ ձյան վրա,
Կամ աչքերիդ լուսանցքներում...

Հոգ չէ, թե որ ձյունը հալվի.
Գիտե՞ս, թե ի՞նչ ծաղիկներ են աշխարհ գալու,
Ի՞նչ ծաղիկներ...

Իսկ ճերմակը լուսանցքներիդ,
Ուր մի պտղունց ձյուն էլ չկա,
Դեռ կհալվի՝
Ծաղկեցնելով տողերը մերկ,
Տողերը մեր՝
Քո աչքերի...





255 ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐ՝ ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայտնի են 2014-2015 ուսումնական տարվա հեռակա ուսուցման ընդունելության քննությունների արդյունքները:

Այս տարի Վանաձորի պետական համալսարանը հեռակա ուսուցման համակարգում կրթություն ստանալու համար ընդունելություն հայտարարել էր 15 մասնագիտությունների գծով՝ ֆիզիկա, կենսաբանություն, աշխարհագրություն, դեղագործական քիմիա, պատմություն, իրավագիտություն, հայոց լեզու և գրականություն, օտար լեզու և գրականություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, ռուսաց լեզու և գրականություն, ինֆորմատիկա, մանկավարժություն և հոգեբանություն, մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն), սոցիալական մանկավարժություն, կառավարում:

Հեռակա ուսուցման համակարգում բուհ ընդունվելու համար դիմել էին 275 հոգի, որոնցից քննական շրջանը հաղթահարել են 250-ը, ևս 5 ուսանող ընդունվել են Սփյուռքից:

Առավել շատ առաջին կուրսեցիներ ընդունվել են «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտությունում (33 հոգի), ամենից քիչ՝ «Օտար լեզու և գրականություն» մասնագիտությունում (11 հոգի):

Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Սամվել Աղաջանյանը նշեց, որ այդ ցուցանիշը



սպասելի էր. «Ընդունելության քննությունները ընթացել են բնական

ոն հունով, թվանշանների հետ կապված որևէ բողոքարկում չի եղել: Քննական շրջանը չեն հաղթահարել դիմորդներից 25-ը: Եթե հաշվի առնենք հանրապետությունում դիմորդների թվի ընդհանուր նվազումը, ապա այս ցուցանիշը գոհացուցիչ է: Ողջունելի է նաև այն, որ վերջին տարիներին դիմորդների թիվն ավելանում է Սփյուռքից՝ Ռուսաստանի Դաշնությունից, Վրաստանից»:

Հարցին, թե նախորդ տարվա արդյունքների համեմատ ինչպիսին է ներկայիս ցուցանիշը, Ս. Աղաջանյանը ժպտով նշեց՝ ուսանողների թիվը 2-ով ավելացել է:

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԵՎ ԻՐԱԲԵՐՎԱԾ ԳՐԹԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. Հրաչիկ Սիմոնյան – Հայերի գանգավածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), 2009 թ.
2. Հրաչիկ Սիմոնյան – Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք III, 2009 թ.
3. Հրաչիկ Սիմոնյան – Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք IV, 2010 թ.
4. Հրաչիկ Սիմոնյան – Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք V, 2013 թ.
5. Արման Եղիազարյան – Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը (Պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), 2010 թ.

6. Էդուարդ Աթայան – Նշան, համակարգ, հաղորդակցում, հողվածների ժողովածու՝ նվիրված Էդ. Աթայանի հիշատակին, 2011 թ.
7. Վանիկ Սանթրյան – Ձեր ընծայագրի հետքերով, ինքնալրագիտարան երկու հատորով, հատոր I (Ա-Կ), պատվակալ խմբագիր՝ Ջավեն Եկավյան, 2011 թ.
8. Վանիկ Սանթրյան – Ձեր ընծայագրի հետքերով, ինքնալրագիտարան երկու հատորով, հատոր II (Հ-Ֆ), պատվակալ խմբագիր՝ Ջավեն Եկավյան, 2012 թ.
9. Արման Եղիազարյան – Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.), Պատմաաշխարհագրական ուսումնասիրություն, 2011 թ.



«Վանաձորի պետական համալսարան»
երկշաբաթաթերթ
Վկայական՝ 727
2001, ՀՀ, Վանաձոր,
Տիգրան Մեծի 36
Էլ. փոստ՝ vsu69@mail.ru

Հիմնադիր՝ ՎՊՀ
Հրատարակիչ՝
«Վանաձորի պետական համալսարան»
երկշաբաթաթերթի խմբագրություն
Տպաքանակը՝ 300
Տպագրվել է ՎՊՀ տպարանում

Խմբագիր՝ Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ
Պատասխանատու՝ ԱՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ Աշխեն ԳԱԼՍՏՅԱՆԻ